«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1727

«16» 12 2022թ.

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության տնօրեն
Լ.Փնջոյանին

Հարգելի տիկին Փնջոյան,

Համաձայն 2022 թվականի օգոստոսի 12-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Աննարկա» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-36-ԵՊԲՀ-8» ծածկագրով պայմանագրի՝ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունը պարտավորվել էր 60 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը: Մատակարարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև հոկտեմբերի 12-ը:

2022 թվականի հոկտեմբերի 24-ին Ընկերության կողմից մատակարարվել է Zhuhai Vision Medical LF52 մոդելի դյուրակիր վիդեոբրոնխոսկոպը, սակայն հանձնման-ընդունման գործընթացի ընթացքում արձանագրվել են հանձնված սարքավորման և պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի մի շարք անհամապատասխանություններ: Երկարատև բանավոր քննարկումներից և Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ հիվանդին իրականացված փաստացի հետազոտությունից հետո միայն, երբ գործնականորեն ապացուցվեց անհամապատասխանությունը, այն շտկելու նպատակով Ընկերությանը տրամադրվել էր նոր, ողջամիտ 10-օրյա ժամկետ, ինչի մասին Ընկերությունը պատշաճ ծանուցվել է նոյեմբերի 21-ին Համալսարանի ռեկտորի թիվ 15/1570 գրությամբ:

Ի պատասխան Համալսարանի 21.11.2022թ. թիվ 15/1570 գրության Ընկերության տնօրեն Լ.Փնջոյանի կողմից 29.11.2022թ.-ին ստացվել է թիվ 68 գրությունը, որով Ընկերությունը հայտնել է, որ թիվ 15/1570 գրությունը ստացել է 25.11.2022թ.-ին, և որ պարտավորվում է փոխարինել սարքավորումը դեկտեմբեր ամսվա ընթացքում:

Սակայն «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում 14.12.2022թ.-ին մատակարարված ապրանքը կրկին ստուգվել է «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկայությամբ և կրկին չի համապատասխանել պայմանագրով սահմանված ապրանքին: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ եզրակացության պատճենը ներկայացվում է կից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Աննարկա» ՍՊԸ-ին տրվել էր անհամապատասխանությունները շտկելու տասնօրյա ողջամիտ ժամկետ՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 5-ը, այն, որ Համալսարանը հաշվի առնելով երկարատև համագործակցությունը և հիմք ընդունելով «Աննարկա» ՍՊԸ-ի 29.11.2022թ.-ի գրությամբ նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ լրացուցիչ ժամկետը (2022թ.-ի դեկտեմբերի սկիզբ) միակողմանի չի լուծել պայմանագիրը տրամադրված ողջամիտ ժամկետի ավարտին, և այն, որ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից նշված ժամկետում մատակարարված ապրանքը կրկին չի համապատասխանում պայմանագրի պահանջներին, առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-36-ԵՊԲՀ-8» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի ա) և բ) պարբերություններով՝ Համալսարանը միակողմանի լուծում է 12.08.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-36-ԵՊԲՀ-8» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Միաժամանակ առաջարկում ենք հնարավորինս շուտ ետ վերցնել «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից 24.11.2022թ.-ին և 14.12.2022թ.-ին մատակարարված և Համալսարանում գտնվող՝ պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող՝ Zhuhai Vision Medical LF52 մոդելի դյուրակիր վիդեոբրոնխոսկոպը և դրա մասերը:

ՌԵԿՏՈՐ՝ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ